ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

ՔԱՅԼ 1.

☐ 20:00-ին արգելել ընտրողների մուտքը քվեարկության սենյակ, վերջին քվեարկողից հետո փակել քվեատուփի ճեղքը, հաշվել քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը և անհապաղ հաղորդել տարածքային ընտրական հանձնաժողովին:

ՔԱՅԼ 2.

☐ Փաթեթավորել տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների անհատական կնիքները՝ տեղադրել ընտրական փաստաթղթերի մեծ պարկում:

ՔԱՅԼ 3.

☐ Հաշվել ընտրողների ցուցակներում քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը՝ ստորագրությունների հիման վրա: Ընտրողների ցուցակի և քվեարկության օրը կազմվող լրացուցիչ ցուցակի թվերն առանձին-առանձին հայտարարել և գրառել գրանցամատյանում, այդ թվերը գումարել և գումարը որպես քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվ գրառել գրանցամատյանում:

☐ Եթե տեխնիկական սարքավորումն անխափան աշխատել է քվեարկության ընթացքում, ապա սարքավորման միջոցով տպել տեղեկանք՝ տեղամասում մասնակիցների հերթական համարների վերաբերյալ:

☐ Տեղեկանքի մեկ օրինակը, ստորագրված հանձնաժողովի նախագահի կողմից և կնքված հանձնաժողովի կնիքով, տեղադրել ընտրական փաստաթղթերի մեծ պարկում:

Տեղեկանքի մեկական օրինակ, ստորագրված հանձնաժողովի նախագահի կողմից և կնքված հանձնաժողովի կնիքով, պահանջի դեպքում, տրամադրել ամփոփման նիստին ներկա գտնվող թեկնածուներին, դիտորդներին և վստահված անձանց:

Տեխնիկական սարքավորման միջոցով տեղեկանքը տպելու անհնարինության դեպքում՝ այդ մասին գրառել գրանցամատյանում:

Փաթեթավորել ընտրողների ցուցակը (առկայության դեպքում նաև քվեարկության օրը կազմված լրացուցիչ ցուցակը) և տեղադրել առանձին՝ ցուցակների համար նախատեսված փոքր պարկում և փակել: Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը ստորագրում են պարկի վրա, կնքում հանձնաժողովի կնիքով և վրան գրում ընտրական տեղամասի համարը:

ՔԱՅԼ 4.

Հաշվել ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորման միջոցով տպված կտրոնները, թիվը հայտարարել և գրառել գրանցամատյանում, փաթեթավորել, փաթեթը կնքել և տեղադրել ընտրական փաստաթղթերի մեծ պարկում:

ՔԱՅԼ 5.

Հաշվել ընտրողներից ստացված համարակալված քվեարկության կտրոնները, թիվը հայտարարել և գրառել գրանցամատյանում, փաթեթավորել, փաթեթը կնքել և տեղադրել ընտրական փաստաթղթերի մեծ պարկում:

ՔԱՅԼ 6.

Հաշվել չօգտագործված ինքնասոսնձվող դրոշմանիշերը, թիվը հայտարարել և գրառել գրանցամատյանում, փաթեթավորել, փաթեթը կնքել և տեղադրել ընտրական փաստաթղթերի մեծ պարկում պարկում:

ՔԱՅԼ 7.

☐ Հաշվել չօգտագործված համարակալված քվեարկության կտրոնները, թիվը հայտարարել և գրառել գրանցամատյանում, փաթեթավորել, փաթեթը կնքել և տեղադրել ընտրական փաստաթղթերի մեծ պարկում:

✘ Համարակալված քվեարկության կտրոնները չօգտագործվելու դեպքում դրանք չեն հաշվվում, և գրանցամատյանում նշվում է տարածքային ընտրական հանձնաժողովի հատկացրած կտրոնների թիվը:

ՔԱՅԼ 8.

☐ Առանց հաշվելու փաթեթավորել չօգտագործված քվեաթերթիկները և փաթեթը առձեռն ներկայացնել տարածքային ընտրական հանձնաժողով:

ՔԱՅԼ 9.

☐ Բացել քվեատուփը և սահմանված կարգով տեսակավորել քվեաթերթիկները:

☐ Հաշվել յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի օգտին քվեարկված քվեաթերթիկ-ները, թվերը հայտարարել և գրառել գրանցամատյանում, փաթեթավորել, փաթեթները կնքել, յուրաքանչյուր փաթեթի վրա նշել կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը և տեղադրել ընտրական փաստաթղթերի մեծ պարկում:

☐ Հաշվել անվավեր քվեաթերթիկները, թիվը հայտարարել և գրառել գրանցամատյանում, փաթեթավորել, փաթեթը կնքել և տեղադրել ընտրական փաստաթղթերի մեծ պարկում

ՔԱՅԼ 10.

☐ Կազմել և ստորագրել տեղամասում յուրաքանչյուր քվեարկության արդյունքների արձանագրությունը՝ 4 օրինակից և

- ☐ մեկ օրինակը փակցնել տեղամասային կենտրոնում՝ ընտրողների ցուցակների կողքին,
- ☐ մեկ օրինակը տեղադրել ընտրական փաստաթղթերի պարկում և պարկը փակել,
- ☐ երկու օրինակն առձեռն ներկայացնել տարածքային ընտրական հանձնաժողով:

✓ **Տարածքային ընտրական հանձնաժողով առձեռն ներկայացնել նաև՝**

- ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման մեծ պարկը,
- ընտրողների ցուցակների փոքր պարկը,
- քվեարկության արդյունքների արձանագրության 2 օրինակը,
- հանձնաժողովի գրանցամատյանը,
- հանձնաժողովի կնիքը,
- տեխնիկական սարքավորումը,
- չօգտագործված քվեաթերթիկները,
- քվեատուփից հանված քվեարկության ծրարները,
- չօգտագործված քվեարկության ծրարները,
- քվեատուփը,
- քվեարկության խցիկները: